



2016

ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ





Չկան

անհաղթահարելի

բարձրունքներ

Կարևորը

ճիշտ նպատակի

սահմանումն է

ԱՐԱՐԱՏ  
(5165Մ)





# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Խորհրդի նախագահի ուղերձը .....	6
2. Վարչության նախագահի ուղերձը .....	8
3. Հայաստանի բանկային համակարգը .....	10
4. Ղեկավարության հաշվետվությունը .....	13
4.1 Բանկի առաքելությունն ու արժեքները .....	13
4.2 2016 թվականի կարևոր իրադարձությունները .....	14
4.3 Առանցքային ֆինանսական ցուցանիշները .....	17
4.4 Մանրածախ բիզնեսը .....	22
4.5 Կորպորատիվ բիզնեսը .....	26
4.6 Ռիսկերի կառավարումը .....	28
4.8 Տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական անվտանգություն.....	32
4.9 Մասնաճյուղային ցանցը .....	35
5. Բանկի ռազմավարությունը .....	38
6. Կորպորատիվ կառավարումը .....	39
6.1. Կորպորատիվ կառավարման համակարգը .....	39
6.2. Տեղեկատվություն բաժնետերերի համար .....	40
7. Ներդրողների և միջազգային կառույցների հետ աշխատանքը .....	44
8. Ներքին հսկողություն և աուդիտ .....	46
9. Անձնակազմի կառավարումը և կադրային քաղաքականությունը .....	49
10. Մեր թիմը .....	50
11. Ֆինանսական հաշվետվություններ .....	54
12. Կոնտակտային տվյալներ .....	62



**ԳԱԳԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ**

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի նախագահ

Հարգելի հաճախորդներ, ներդրողներ և գործընկերներ  
2016 թվականը ռազմավարական նշանակության և որոշիչ տարի էր ՀՀ բանկային համակարգի հետագա զարգացման համար: Կապիտալիզացիայի բարձրացման գործընթացն ուղեկցվեց բանկերի միաձուլումներով և շուկայի վերափոխմամբ, որի արդյունքում մենք թևակոխեցինք հայաստանյան բանկային համակարգի զարգացման և արդյունավետության նոր փուլ: Յունիբանկը սահմանված ժամկետում լիովին կատարեց կապիտալի նվազագույն չափի՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվը և հաջողությամբ շարունակեց գործունեության արդյունավետության բարձրացմանը, հաճախորդային

բազայի աճին և շուկայական դիրքերի ամրապնդմանն ուղղված իր ռազմավարության իրականացումը:

Նախորդ տարին մեզ համար հորելյանական էր. բանկի 15 տարվա աշխատանքը նշանավորվել է մի շարք ձեռքբերումներով և նորարարական լուծումներով: Այս բոլոր տարիներին մենք ակտիվորեն զարգացել ենք, ընդլայնել բանկի կողմից առաջարկվող գործիքների և ծառայությունների տեսականին, ինչի շնորհիվ դարձել ենք այնպիսի բանկ, որին վստահում է 325 000 հաճախորդ: Ավելի քան 3 000 փոքր և միջին ձեռնարկություններ ընտրել են Յունիբանկը՝ որպես ֆինանսական գործընկեր:

Այսօր Յունիբանկը ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում և ԼՂՀ-ում: Բանկի սպասարկման ցանցը ներառում է 47 մասնաճյուղ, 52 պրոմո-կետ և ներկայացուցչություն Մոսկվայում:

Չնայած բանկային համակարգի աշխատանքի համար ոչ բարենպաստ պայմաններին և տնտեսական ակտիվության որոշակի կրճատմանը, 2016 թվականին Յունիբանկը հիմնական ուղղություններով ապահովել է զգալի արդյունք: Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 34,8 մլրդ ՀՀ դրամ՝ տարվա սկզբից ավելանալով ավելի քան 53%-ով: Հաշվի առնելով կապիտալի զգալի աճը և ակտիվների որակի բարելավումը, Moody's Investors Service միջազգային գործակալությունը այս տարվա մարտին բարձրացրեց Յունիբանկի վարկանիշը մինչև B2, կանխատեսումը սահմանելով կայուն:

Յունիբանկի գործունեության հանդեպ մեծ հետաքրքրության և հանրությանը պատկանող բաժնետոմսերի չափաբաժնի մեծացման շնորհիվ, բանկի սովորական անվանական բաժնետոմսերը «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-ի երկրորդային (B) ցուցակից տեղափոխվեցին հիմնական (A) ցուցակ: Յունիբանկի Խորհուրդը որոշում ընդունեց բանկի սովորական

անվանական բաժնետոմսերի սեփականատերերին վճարել միջանկյալ շահութաբաժիններ 2016թ.-ի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի համար՝ սովորական անվանական բաժնետոմսերի տեսքով՝ 4 348 հատ բաժնետոմսի դիմաց 420 բաժնետոմս հաշվարկով, որը համարժեք է 12.9% տարեկան եկամտաբերությանը:

2016 թվականին Յունիբանկն իրականացրեց դոլարային և դրամային պարտատոմսերի առաջին թողարկումը և ամբողջությամբ տեղաբաշխեց այն: Պարտատոմսերը ցուցակվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ում և ընդգրկվեցին պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում:

Ստեղծելով նոր ներդրումային հնարավորություններ, Յունիբանկը շարունակում է իր ռազմավարության իրականացումը որպես ժողովրդական բանկ՝ ներգրավելով հասարակությանը բանկի կառավարման գործընթացում՝ այդ կերպ այն ավելի արդյունավետ և թափանցիկ դարձնելով ինչպես հաճախորդների, այնպես էլ՝ ներդրողների համար:

Հաշվետու տարում մեծ աշխատանք է տարվել հաճախորդների սպասարկման բարելավման և առաջարկվող ծառայությունների տեսականու ընդլայնման ուղղությամբ: Գործել են շուկայի փոփոխություններին և հաճախորդների պահանջմունքներին համապատասխան սեզոնային առաջարկներ: Բանկի ղեկավարությունը մեծ ուշադրություն է հատկացրել գործունեության արդյունավետության բարձրացմանը, վարչակառավարչական ծախսերի կրճատմանը, ինչպես նաև ռիսկերի կառավարման և անդերրայթինգի համակարգերի կատարելագործմանը: Ներքին հսկողության ուժեղացման նպատակով բանկում ստեղծվել և գործում է համապատասխանության վարչություն:

Տնտեսական այս իրավիճակում ձեռքբերված արդյունքները վկայում են բանկի զարգացման ռազմավարության ճիշտ

մշակման, ինչպես նաև բանկի Խորհրդի աջակցության և վերահսկողության ներքո՝ Վարչության կողմից դրա որակյալ և գրագետ իրականացման մասին:

Մենք մտադիր ենք շեշտակի ակտիվացնելու աշխատանքը շուկայում բանկի մասնաբաժնի ավելացման և դիրքերի ամրապնդման համար: Բանկի Խորհուրդը հաստատել է զարգացման ռազմավարությունը 2017-2020 թվականների համար, որի հիմնական գերակայություններն են շուկայում առաջատար դիրքերի գրավումը, բանկի գործունեության արդյունավետության բարձրացումը և աճն առավելագույն հզորությամբ: Մենք նպատակ ունենք մեծացնել բանկի մասնաբաժինը մանրածախ վարկավորման գծով շուկայի մինչև 13%, POS վարկավորումը՝ 40%, իսկ կորպորատիվ վարկավորումը՝ 10% չափով: 2020 թվականին բանկը նախատեսում է ապահովել 5 մլրդ դրամի շահույթ և բարձրացնել իր բաժնետոմսերի շուկայական գինը:

Ամփոփելով խոսքս, Խորհրդի անունից շնորհակալություն եմ հայտնում մեր բոլոր ներդրողներին, հաճախորդներին և գործընկերներին ցուցաբերած վստահության և համագործակցության համար: Մենք հպարտ ենք, որ մեր հաճախորդներն ու բաժնետերերը խորհուրդ են տալիս Յունիբանկը՝ որպես վստահելի և կայուն գործընկեր, որի հետ կարելի է կառուցել հարմար և շահավետ համագործակցություն:

Մեր երախտագիտությունն եմ հայտնում նաև Յունիբանկի անձնակազմին՝ համատեղ արդյունավետ աշխատանքի համար:

Յունիբանկը կշարունակի զարգացումն ի շահ իր բաժնետերերի և հաճախորդների, կձգտի էլ ավելի բարձրացնել բանկի եկամուտն ու ներդրումային գրավչությունը՝ ապահովելով առավել որակյալ բանկային սպասարկում:



**ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ**  
«Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության նախագահ

*Հարգելի բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ,*  
Նախորդ տարին յուրահատուկ էր ՀՀ բանկային համակարգի համար՝ տնտեսական իրավիճակի վերափոխման, շուկայի նոր պահանջների և հաճախորդների հանդեպ մոտեցման փոփոխությունների տեսանկյունից: 2016 թվականին զգալի աշխատանք է կատարվել սահմանված ժամկետներում բանկի կապիտալի համալրման, առանցքային նշանակություն ունեցող ուղղությունների արդյունավետության բարձրացման և բիզնես գործընթացների օպտիմալացման ուղղությամբ: Բանկի ղեկավարությունը առանձնահատուկ ուշադրություն է հատկացրել վարկային պորտֆելի բարելավմանը, ռիսկերի

համակարգի կատարելագործմանը, ռեսուրսային բազայի դիվերսիֆիկացմանը և պահուստի վերահսկմանը: Միջոցներ են ձեռնարկվել օպերացիոն ծախսերի կրճատման, ինչպես նաև ոչ պրոֆիտային ակտիվներից ազատվելու ուղղությամբ:

Ամփոփելով 2016 թվականի արդյունքները, արժե նշել, որ չնայած տնտեսական ակտիվության և բանկային համակարգում վարկավորման ծավալների որոշակի կրճատմանը, Յունիբանկը հիմնականում կատարել է իր առջև դրված խնդիրները և պահպանել է իր դիրքերը շուկայում: Մեր գործունեության արդյունքները վկայում են ռազմավարության արդյունավետության մասին և թույլ են տալիս կանխատեսել բանկի հետագա կայուն աճը:

2016 թվականը նշանավորվեց բանկի համար կարևոր իրադարձություններով և ձեռքբերումներով: Տարվա ընթացքում Յունիբանկն իրականացրեց 11.3 մլրդ ՀՀ դրամ բաժնետոմսերի երեք թողարկում, ինչը փաստում է բանկի հանդեպ ներդրողների վստահության մասին:

Մատուցվող ծառայությունների և գործիքների տեսականու ընդլայնումը, վաճառքի կետերի արդյունավետության բարձրացմանը զուգընթաց, հնարավորություն տվեցին էապես ընդլայնել Յունիբանկի մասնաբաժինը մանրածախ շուկայում և պահպանել առաջատարի դիրքը POS վարկավորման գծով: Մանրածախ բիզնեսի գծով շահույթը նախորդ տարվա համեմատ աճել է երկու անգամ:

Մանրածախ բիզնեսում իր դիրքերի ամրապնդման նպատակով, Յունիբանկն ամբողջովին անցում կատարեց «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ընկերության կողմից մշակված նոր CRM համակարգին: ProtoCRM համակարգը հնարավորություն տվեց կրճատել ծախսերը, բայց և միևնույն ժամանակ բարձրացնել հաճախորդների սպասարկման որակն ու արդյունավետությունը, ինչն առաջնահերթություն է մանրածախ ուղղվածություն ունեցող բանկի համար: 2016 թվականին Յունիբանկի վարկային կոնվեյերը մշակել է ավելի քան 275 հազար հայտ: Բանկի մանրածախ վարկերի քանակը հաշվետու տարվա վերջին գերազանցել է 203 հազարը:

Հատուկ ֆիզիկական անձ հաճախորդների համար 2016 թվականին Երևանում բացվեց «Պարոյր Սևակ» մասնաճյուղը:

ՓՄՁ-ների համար վարկային միջոցների հասանելիությունը շարունակում է մնալ ամենաարդիական խնդիրներից մեկը: Յունիբանկի հիմնական խնդիրներից մեկը ձեռնարկություններին մատչելի, երկարաժամկետ դրամական միջոցներ և խորհրդատվական աջակցություն տրամադրելն է: Մենք ձգտում ենք ոչ միայն բարելավել վարկային պայմանները, այլ նաև պարզեցնել վարկի տրամադրման գործընթացը: Այդ նպատակով «Protobase Laboratories» ընկերության հետ համագործակցության շրջանակում բանկն ավտոմատացրեց փոքր բիզնեսին տրամադրվող անգրավ վարկերի հաստատման գործընթացը: Արդյունքում, բանկը հաջողությամբ լուծում է որակյալ վարկերի բազայի ձևավորման, վարկային հայտի ուսումնասիրման արագության և տրամադրված վարկերի քանակի ավելացման խնդիրը՝ միաժամանակ նվազեցնելով բանկի ծախսերը: Նման մոտեցումն էապես բարձրացնում է բանկի նկատմամբ հաճախորդների լոյալությունը և թույլ է տալիս բանկին ակտիվ տեմպերով զարգացնել և ավելացնել փոքր բիզնեսի ֆինանսավորումը:

Հաշվետու տարում Յունիբանկը շեշտակի ընդլայնել է միջազգային համագործակցությունը և վարկային ծրագրերի շրջանակներում ակտիվորեն աշխատել Եվրոպական ներդրումային բանկի (EIB), Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) և Առևտրի և զարգացման Սևծովյան բանկի (BSTDB) հետ:

Ինչպես և նախորդ տարիներին, 2016 թվականին բանկն առանձնահատուկ ուշադրություն է հատկացրել հաճախորդների սպասարկման որակի բարձրացմանը և նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը: Յունիբանկն ամենախինովացիոն բանկերից մեկն է, որը մշտապես ակտիվ ներդրումներ է կատարել SS ոլորտում: Բանկը գործարկեց Տվյալների մշակման ժամանակակից կենտրոնը, որը նախատեսված է սերվերային, ցանցային և կոմունիկացիոն սարքավորումների տեղաբաշխման և անխափան աշխատանքի ապահովման համար: 2016 թվականին Յունիբանկը սկսեց մոբայլ բանկինգ համակարգի աշխատանքները:

Յունիբանկը մեծ ուշադրություն է հատկացնում նաև

տեղեկատվական անվտանգությանը: Բանկը հաջողությամբ վերահաստատեց ISO 27001:2013 հավաստագիրը, ստացավ PCI PIN Security 2.0 և PCI DSS 3.2. միջազգային հավաստագրերը:

Հաշվետու տարում աճ է գրանցել Յունիբանկի նաև ավանդային պորտֆելը: Բանկի հանդեպ եղած վստահության շնորհիվ, Յունիբանկի ավանդները մեծ պահանջարկ են վայելում և հնարավորություն են տալիս ավանդատուներին շահավետ կուտակելու և արդյունավետ կառավարելու իրենց խնայողությունները: 2016 թվականին Յունիբանկում ավանդների ծավալը գերազանցել է 114 մլրդ դրամը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 26%-ով:

Երկրի ներդրումային հնարավորությունների և, մասնավորապես, Յունիբանկի առաջարկների ներկայացման նպատակով 2016 թվականին բանկի պատվիրակությունը Լոնդոնում մասնակցեց Cbonds Emerging Markets Bond Conference համաժողովին: Աթենքում կայացած «Ապագայի բանկ 2016» համաժողովում Յունիբանկը ճանաչվեց «Տարվա գործընկեր»:

Մենք խորապես երախտապարտ ենք բաժնետերերին, հաճախորդներին և գործընկերներին վստահության և մեր ընդհանուր ռազմավարական նպատակին հասնելու գործում աջակցության համար:

Շնորհակալ եմ բանկի բոլոր աշխատակիցներին արհեստավարժության և բարձր պատասխանատվության համար: Ընթացիկ տարին թիմից կպահանջի առավել մեծ ջանքեր, կատարելագործում և պատրաստակամություն աշխատելու բարձր մրցունակություն ունեցող միջավայրում: Վստահ եմ, որ հետագայում ևս մեր համագործակցությունը կլինի արդյունավետ և հաջողություններով լի:

2017 թվականին ևս Յունիբանկը շարունակում է աշխատել արդյունավետության և բիզնեսի շահութաբերության բարձրացման ուղղությամբ՝ ձգտելով ապահովելու բանկի հաջող զարգացումն ի շահ հաճախորդների և բաժնետերերի:





# ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԱ ՅՈԹ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԳԱԳԱԹ, ՈՐՈՆՔ ԵՐԱՋՈՒՄ ԵՆ ՆԿԱՃԵԼ ԲՈԼՈՐ ԼԵՌՆԱԳՆԱՅՆԵՐԸ: ՈՒՄ ՀԱՋՈՂՎՈՒՄ Է, ՆԱ ԴԱՌՆՈՒՄ Է «ՅՈԹ ԳԱԳԱԹՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ» ՊԱՏՎԱԿՈՐ ԱՆԴԱՄ:

## ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հայաստանյան բանկային համակարգի համախառն ակտիվները 2016թ.-ին կազմել են 4,019.6 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.5%-ով /3,510.9 մլրդ ՀՀ դրամ/: Բանկերի ակտիվների աճի տեմպերն արտացոլում են վարկավորման ծավալների աճը: Համակարգի վարկային ներդրումների ընդհանուր ծավալը 2016թ.-ի արդյունքներով կազմել է ավելի քան 2,533 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 22.3%-ով: Բանկերի պարտավորությունները հաշվետու տարրում աճել են 13.4%-ով և կազմել 3,359.2 մլրդ ՀՀ դրամ: Համախառն ավանդների ծավալը 2016թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 2,267.1 մլրդ ՀՀ դրամ, ինչը 27.7%-ով կամ 519 մլրդ դրամով ավելի է 2015թ.-ի դեկտեմբերի ցուցանիշից: Հարկանշական է, որ նախորդ տարի բանկային

համակարգի կապիտալիզացիայի մակարդակը աճել է 23.1%-ով՝ պայմանավորված նորմատիվային կապիտալը 2017թ.-ի հունվարի 1-ին մինչև 30 մլրդ ՀՀ դրամ մեծացնելու՝ ՀՀ ԿԲ-ի պահանջով: ՀՀ բանկային համակարգի շահույթը 2016թ.-ին կազմել է 35.9 մլրդ ՀՀ դրամ: Հաշվետու տարրում տնտեսական աճը Հայաստանում կազմել է 0.2%, ՀՆԱ-ն՝ 5,080 մլրդ ՀՀ դրամ կամ 10,5 մլրդ ԱՄՆ դոլար: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1 693 523 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 1 679 920 ՀՀ դրամի դիմաց: ՀՆԱ-ում բանկային ակտիվները 2016թ.-ի արդյունքներով կազմել են 79%, իսկ վարկային ներդրումները՝ 50%, նախորդ տարվա 70% և 43% դիմաց:



Աճի միտումը /2009-2016թթ./

Ակտիվներ


303%

Կապիտալ

231%

Վարկային ներդրումներ

338%





# ՋՈՄՈԼՈՒՆԳՄԱ

(8848մ)

Գտնվում է Հիմալայան լեռնաշղթայում, Նեպալի և Չինաստանի սահմանին, ունի եռակողմ բուրգի տեսք: Էվերեստի գագաթն առաջին անգամ նվաճվել է 1953 թվականին:



### ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- ուժեղ թիմ և արդյունքին նպատակաուղղվածություն
  - հասարակության վստահություն
- ապրանքանիշի բարձր ճանաչելիություն և հեղինակություն
- հուսալիություն և կայունություն

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

### Բանկի առաքելությունը և արժեքները

Յունիբանկը դիսամիկ զարգացող իննովացիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի:

Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև՝ որակյալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:



### ՄԵՆՔ ԶԳՏՈՒՄ ԵՆՔ

- ամրապնդել և ընդլայնել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում
- ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ և կատարելագործել սպասարկման գործընթացը
  - բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը
- ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- բարձրացնել բանկի ներդրումային գրավչությունը

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յունիբանկը բավարարեց ՀՀ ԿԲ-ի՝ նորմատիվային կապիտալի չափի վերաբերյալ պահանջը և համալրեց ընդհանուր կապիտալը մինչև 34.8 մլրդ ՀՀ դրամի



Յունիբանկի սովորական անվանական բաժնետոմսերը «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-ի երկրորդային (B) ցուցակից տեղափոխվեցին հիմնական (A) ցուցակ, ինչը հնարավոր եղավ հանրությանը պատկանող բաժնետոմսերի չափաբաժնի մեծացման շնորհիվ:



Բանկի Խորհուրդը որոշում կայացրեց 2016թ.-ի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի համար սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին վճարել միջանկյալ շահութաբաժիններ բաժնետոմսերի տեսքով՝ 4 348 հատ դիմաց 420 բաժնետոմս հաշվարկով, որը համարժեք է 12.9% տարեկան եկամտաբերությանը:



Յունիբանկն անցում կատարեց «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ընկերության կողմից մշակված նոր Pro-toCRM համակարգին:



Յունիբանկն առաջին անգամ թողարկեց դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք ցուցակվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ում և ընդգրկվեցին պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում:



Յունիբանկը գործարկեց Տվյալների մշակման ժամանակակից կենտրոն, որն իրենից ներկայացնում է ունիվերսալ տեղեկատվական ենթակառուցվածք,

որը նախատեսված է սերվերային, ցանցային և կոմունիկացիոն սարքավորումների տեղաբաշխման և անխափան աշխատանքի ապահովման համար:



Տարվա ընթացքում բանկն իրականացրեց 11,3 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով բաժնետոմսերի երեք թողարկում:



Հատուկ ֆիզիկական անձ հաճախորդների սպասարկման համար Յունիբանկը բացեց «Պարույր Սևակ» նոր մասնաճյուղը:



Աթենքում կայացած «Ապագայի բանկ 2016» միջազգային համաժողովում Յունիբանկը ճանաչվեց «Տարվա գործընկեր»:



Բանկն անցավ ISO 27001:2013 միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան վերահավաստագրումը:



Յունիբանկը հաջողությամբ անցավ PCI PIN Security 2.0 ստանդարտի պահանջներին համապատասխանության գործընթացը և ստացավ միջազգային հավաստագիր:



Յունիբանկի պատվիրակությունը Լոնդոնում մասնակցեց Cbonds Emerging Markets Bond Conference համաժողովին, որը նվիրված էր պարտատոմսերի շուկային:



Յունիբանկը բաժնետերերի, հաճախորդների, գործընկերների և աշխատակիցների հետ միասին հանդիսավոր նշեց իր հիմնադրման 15-ամյակը:



Հատուկ ներդրողների համար Յունիբանկը գործարկեց corp.unibank.am կայքը:

# ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ

## 204 ԲԱԺՆԵՏԵՐ

2016թ.-ին բաժնետոմսերի թողարկման  
և տեղաբաշխման ծավալը

**11 ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ**

Բորսայական շուկա՝  
**NASDAQ OMX ARMENIA**

Շուկա ստեղծող /մարքեթ-մեյքեր /  
**«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ**

Մեկ բաժնետոմսի գինը  
**230 ՀՀ ԴՐԱՄ**

Բաժնետոմսերի ցուցակում  
**A ՀԱՐԹԱԿ**

Հաշվի օպերատոր  
**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ**

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ

Moody's Investors Service միջազգային գործակալությունը բարձրացրել է Յունիբանկի վարկանիշը՝ սահմանելով B2 դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար: Բազային վարկային գնահատականը /baseline credit assessment (BCA)/սահմանվել է b3, իսկ կոնտրադենտի ռիսկի գնահատականը /long-term Counterparty Risk Assessment (CR Assessment)/՝ B2(cr)/NP(cr) մակարդակի վրա: Կանխատեսումը՝ կայուն:

## ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿԵՐ

CB UNISTREAM

ALFA BANK

EUROTRUST BANK

BANK OF GEORGIA

RAIFFEISEN ZENTRALBANK OESTERREICH AG

RIETUMU BANKA

TRANSSTROIBANK





# ԱԿՈՆԿԱԳՈՒԱ

(6962մ)

Այն հարավային կիսագնդի ամենաբարձր լեռնագագաթն է,  
գտնվում է Արգենտինայում: Համարվում է Անդերի լեռնաշղթայի  
մաս: Առաջին անգամ լեռնագագաթը նվաճվել է 1897 թվականին:



**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

2016 թվականի վերջին  
Յունիբանկն ապահովել է հետևյալ  
ցուցանիշները՝

**ԱԿՏԻՎՆԵՐ**

**185.4**  
մլրդ ՀՀ դրամ

**ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**150.5**  
մլրդ ՀՀ դրամ

**ԿԱՊԻՏԱԼ**


**34.8**  
մլրդ ՀՀ դրամ

**ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ**


**118.6**  
մլրդ ՀՀ դրամ

	Դիրքը շուկայում	Մասնաբաժինը
Ակտիվներ	10	4.6%
Պարտավորություններ	10	4.5%
Ընդհանուր կապիտալ	8	5.3%
Վարկային ներդրումներ	10	4.7%
Ավանդներ	8	5.6%
Հիփոթեքային վարկեր	7	6.3%
Սպառողական վարկեր	5	9.7%
Բանկային քարտեր	4	8.7%



Ակտիվներ /մլն ՀՀ դրամ/




Շահույթ /մլն ՀՀ դրամ/



Ընդհանուր կապիտալ /մլն ՀՀ դրամ/




Պարտավորություններ /մլն ՀՀ դրամ/




**ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ**

2016 թվականի արդյունքներով բանկի վարկային պորտֆելը կազմել է 118.6 մլրդ ՀՀ դրամ: Դրամային վարկային պորտֆելը կազմել է 48.1 մլրդ ՀՀ դրամ (ընդհանուր վարկային պորտֆելի 41%-ը), իսկ արտարժույթային վարկային պորտֆելը՝ 70.5 մլրդ ՀՀ դրամ (ընդհանուր վարկային պորտֆելի 59%-ը): Վարկավորման միջին տոկոսադրույքը 31.12.2016թթ. դրությամբ կազմել է 15.52% տարեկան: Վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման արդյունքում վարկային պորտֆելում մանրաձախ վարկերի ծավալը կազմել է 51.6%, ՓՄՁ վարկերինը՝ 25.7%, իսկ կորպորատիվ վարկերինը՝ 22.7%:


Վարկային պորտֆել /մլն ՀՀ դրամ/




Վարկային պորտֆելի կառուցվածքը /մլն ՀՀ դրամ/



Վարկային պորտֆելի դինամիկան /մլն ՀՀ դրամ/



Վարկային պորտֆելը՝ ըստ արժույթների





# ՄԱԿ ՔԻՆԼԻ

(6168մ)

Հյուսիսային Ամերիկայի ամենաբարձր լեռնագագաթը: Գտնվում է Ալյասկայում, առաջին անգամ այս լեռնագագաթը նվաճվել է 1913 թվականին:

## ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ



2016 թվականի արդյունքներով Յունիբանկը ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալով զբաղեցրել է 5-րդ տեղը ՀՀ բանկային համակարգում: Տարեվերջի դրությամբ ժամկետային ավանդները կազմել են 114.8 մլրդ ՀՀ դրամ, որից 81%-ը բաժին է ընկել ֆիզիկական անձանց ավանդներին:

Ցպահանջ պարտավորությունների ծավալը կազմել է 13 մլրդ դրամ, որից 48%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, իսկ 52%-ը՝ ֆիզիկական անձանց:

ՀՀ ԿԲ-ի հանդեպ պարտավորությունները կազմել են 2.9 մլրդ ՀՀ դրամ:

Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները /մլն ՀՀ դրամ/



Ցպահանջ ավանդները /մլն ՀՀ դրամ/



2016 թվականին բանկի կոմիսիոն եկամուտը կազմել է 1 մլրդ ՀՀ դրամ:

Արտարժույթային գործառնություններից ստացված եկամուտ /մլն ՀՀ դրամ/

Կոմիսիոն եկամուտ /մլն ՀՀ դրամ/



## ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

2016 թվականին Յունիբանկի մանրածախ բիզնեսը շարունակել է դինամիկ զարգացումը, ինչը հնարավորություն տվեց բանկին պահպանելու իր դիրքերը մանրածախ վարկավորման շուկայի առաջատարների շարքում: Անգրավ սպառողական վարկերի պորտֆելը տարեվերջին կազմեց 32.8 մլրդ դրամ (188 000 վարկ), իսկ պլաստիկ քարտերով վարկերի ծավալը՝ 3 մլրդ դրամ (8 100 վարկ): Գրավով ապահովված սպառողական վարկերի ծավալը կազմեց 9.5 մլրդ դրամ (1 800 վարկ), ոսկու գրավով վարկերինը՝ 1 մլրդ դրամ (3 500 վարկ) :

Հաշվետու տարում բանկը շարունակել է ակտիվ համագործակցությունը հիփոթեքային վարկերը վերաֆինանսավորող ընկերությունների հետ: Հիփոթեքային վարկերի պորտֆելը տարեվերջին կազմել է 11.7 մլրդ դրամ (1 200 վարկ), որից 1 մլրդ ՀՀ դրամ գումարի 102 վարկ տրամադրվել է 'Ազգային Հիփոթեքային Ընկերության' վերաֆինանսավորման, իսկ 717 մլն ՀՀ դրամ գումարի 81 վարկ՝ 'Բնակարան Երիտասարդներին' ընկերության հետ համագործակցության շրջանակում:

31.12.2016թ.-ի դրությամբ անգրավ սպառողական վարկերի և քարտային վարկերի մասնաբաժինը բանկի ընդհանուր պորտֆելում կազմել է 32%: Մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 19.7%, տոկոսային եկամուտը՝ 10.8 մլրդ ՀՀ դրամ (բանկի ընդհանուր տոկոսային եկամուտների 59%-ը) :

Մանրածախ վարկավորման բարձր ցուցանիշները 2016 թվականին ապահովվել են հետևյալ միջոցառումների շնորհիվ.

- Յունիբանկի կողմից լիարժեքորեն գործարկվել է «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ընկերության CRM-համակարգը: Ժամանակակից համակարգի շահագործումը բանկին հնարավորություն տվեց ամբողջությամբ ավտոմատացնել վարկերի հայտերի ուսումնասիրման գործընթացը՝ էապես կրճատելով վարկերի հաստատման և ձևակերպման ժամանակը: 2016թ.-ին համակարգի կողմից մշակված հայտերի քանակը կազմել է 275 000 /աճը անցած տարվա հետ համեմատ կազմել է 21%/: Այսօր ապրանքների ձեռքբերման համար սպառողական վարկը բանկի գործընկեր՝ խոշոր առևտրային ցանցերում հաստատվում է մեկ րոպեում:

- POS վարկավորման գծով բանկը համագործակցել է ավելի քան 250 կազմակերպությունների հետ, որոնց հետ համագործակցության շրջանակներում Բանկն իր ծառայությունները ներկայացնում է ավելի քան 500 վաճառասրահներում:


- Ընդլայնվել է պրոմո-կետերի ցանցը՝ հասնելով մինչև 53-ի, որոնց միջոցով տրամադրվել է 10.2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի 50 200 վարկ:

- ավելացել է ոսկու գրավով վարկեր տրամադրող մասնաճյուղերի քանակը՝ 7-ից հասնելով մինչև 14-ի


- ակտիվորեն գովազդվել է վարկային օնլայն հայտերի ընդունման հնարավորությունը: 2016թ.-ին օնլայն ստացված հայտերի քանակը կազմել է 9 200, գումարը՝ 3 430 մլն. ՀՀ դրամ, որից հաստատվել է 890 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով 3 100 վարկ:



### Մանրաձախ վարկերի դինամիկան



### Մանրաձախ վարկային պորտֆելի կառուցվածքը





# ԿԻԼԻՄԱՆՋԱՐՈ

(5891,8մ)

Աֆրիկայի ամենաբարձր կետը: Այն գտնվում է Տանզանիայում  
և առաջին անգամ նվաճվել է 1889 թվականին: Սա միակ լեռն է,  
որտեղ ներկայացված են երկրի բոլոր գոտիները:



### **ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ**

Յունիբանկի ակտիվ քարտերի քանակը 2016թ. տարեվերջին կազմել է ավելի քան 133 հազար: ArCa համակարգի բանկերի ցուցակում քարտերի քանակով Յունիբանկը զբաղեցնում է 4-րդ տեղը, մասնաբաժինը կազմում է 8.7%:

2016թ.-ի վերջին Յունիբանկի սպասարկման ցանցը ներառել է 114 բանկոմատ և 200 վճարային տերմինալ:

Սպասարկման կետերում շրջանառության ծավալը գերազանցել է 2.8 մլրդ ՀՀ դրամը:

Բանկը հանդիսանում է Visa և ArCa վճարային համակարգերի անդամ:



### **ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ**

Յունիբանկը դրամական փոխանցումներ իրականացնում է Յունիստրիմ և IntelExpress համակարգերի միջոցով: 2016թ.-ին Յունիբանկի կողմից սպասարկված փոխանցումների քանակը կազմել է 247 հազար, ծավալը՝ 121 մլն ԱՄՆ դոլար: Մեկ փոխանցման միջին մեծությունը կազմել է 491 ԱՄՆ դոլար:

Շրջանառության կայուն աճի, շահավետ սակագների և լայն աշխարհագրության շնորհիվ «Յունիստրիմ» համակարգը 2016 թվականի ընթացքում պահպանել է առաջատարի դիրքը, հանդիսանալով դրամական փոխանցումների ամենապահանջված համակարգը Հայաստանում:

Եթե 2016-ի սկզբին Յունիբանկում սպասարկվում էր 282 000 հաճախորդ, ապա տարեվերջին՝ արդեն 325 000 հաճախորդ:

## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

2016 թվականին Յունիբանկը հաջողությամբ շարունակել է զարգացնել կորպորատիվ ուղղությունը, որը ներառում է խոշոր կորպորատիվ և ՓՄՁ հաճախորդների սպասարկումը: Բանկը վարկավորում իրականացրել է, մասնավորապես, առևտրի, արտադրության և սպասարկման ոլորտներում, որոնք հանդիսանում են Յունիբանկի վարկային քաղաքականության հիմնական ուղղությունները:

Յունիբանկի վարկային ծրագրերը մշակելիս՝ մենք հաշվի ենք առնում ՓՄՁ-ներին համալիր աջակցության տրամադրման հնարավորությունը, նրանց պահանջ-մունքներն ու սեզոնային գործունեությունը: Այս մոտեցման շնորհիվ ձեռնարկությունը կարող է կրճատել օգտագործվող էներգիայի ծավալները, բարձրացնել բիզնեսի արդյունավետությունն ու մրցունակությունը: ՓՄՁ ներգրավողների առկայությունը մասնաճյուղերում հնարավորություն է տալիս, խորհրդատվական ծառայությունների միջոցով, վերհանել հաճախորդների պահանջունքները և մշակել դրանց բավարարման ամենագործուն տարբերակը:

Բանկի ռազմավարությանը համահունչ՝ կորպորատիվ տնօրինության հիմնական խնդիրներն են շուկայում ամուր դիրքերի պահպանումը և տվյալ ուղղության արդյունավետության բարձրացումը:

Վարկային քաղաքականության շրջանակներում բանկը շարունակել է դիվերսիֆիկացնել իր վարկային


պորտֆելը՝ մեծացնելով ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում: Բիզնես վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում 2016թ.-ի վերջին կազմել է 48,4%:

Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս բանկը վարել է պահպանողական քաղաքականություն՝ հիմնականում ակտիվները կարճաժամկետ տեղաբաշխելով համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում: Պլանային ցուցանիշները կատարելու նպատակով իրականացվել են ՓՄՁ վարկավորման գծով սրորինգային նոր մոդելի մշակում, ՓՄՁ վարկավորման գծով աշխատակիցների որակավորման բարձրացում:


2016թ.-ի ընթացքում Յունիբանկը շեշտակի ընդլայնել է նաև միջազգային համագործակցությունը և վարկային ծրագրերի շրջանակներում ակտիվորեն աշխատել Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC), Առևտրի և զարգացման Սևծովյան բանկի (BSTDB) և Եվրոպական ներդրումային բանկի հետ (EIB):

Հաշվետու տարում Յունիբանկը համագործակցություն սկսեց Գերմանա-հայկական հիմնադրամի և KfW բանկի հետ, որի շրջանակներում առաջարկեց բիզնես վարկավորման նոր ծրագիր՝ ուղղված ձեռնարկությունների էներգաարդյունավետության բարձրացմանը: Ծրագրի մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց ոչ միայն ստանալ բիզնես վարկեր շահավետ պայմաններով, այլ նաև՝ էապես կրճատել ձեռնարկության ծախսերը: Համագործակցության շրջանակում ՓՄՁ-ները կարող են ստանալ մատչելի միջոցներ էներգաարդյունավետ սարքավորումների ձեռքբերման, արտադրական հզորության բարձրացման և տեխնոլոգիաների նորացման համար:

Բիզնես վարկերի դինամիկան /մլն ՀՀ դրամ/



Վարկային պորտֆելի կառուցվածքը



## ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարման համակարգի նպատակն է աջակցել բանկին իր գործունեության ընթացքում առաջացող համընդհանուր ռիսկը պահելու այն մակարդակի վրա, որն ընդունել է բանկն իր ռազմավարական խնդիրների շրջանակում: Ռիսկերի կառավարման համակարգի առաջնահերթ խնդիրն է առավելագույնս ապահովել բանկի ակտիվների և կապիտալի ամբողջականությունը, ինչպես նաև նվազագույնի հասցնել բանկային գործունեությանը բնորոշ բոլոր ռիսկերը, որոնք կարող են հանգեցնել չնախատեսված կորուստների:

Ռիսկերի կառավարման համակարգն իր նպատակին հասնելու համար առաջնորդվում է համակարգված համալիր մոտեցմամբ, որն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը՝

- բացահայտել և վերլուծել բանկային գործունեության ընթացքում ծագող բոլոր ռիսկերը,
- սահմանել տարբեր ռիսկերի նկատմամբ վերաբերմունք /ռիսկ արտրժակ/,
- իրականացնել ռիսկի յուրաքանչյուր տեսակի որակական և/կամ քանակական գնահատումներ,
- կատարել արդեն իսկ իրականացված և պլանավորված գործարքների գծով ռիսկերի մակարդակի ամբողջական և համալիր վերլուծություն՝ բանկային ռիսկերի համընդհանուր/գումարային չափը որոշելու նպատակով,
- գնահատել համընդհանուր /գումարային ռիսկերի թույլատրելի չափը և հիմնավորվածությունը:

Բանկի «Ռիսկերի կառավարման քաղաքականությունը» առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ԿԲ-ի նորմատիվ ակտերով, կանոնակարգերով, Բազելյան կոմիտեի համապատասխան փաստաթղթերով, Ռիսկերի Կառավարման Համընդհանուր Սկզբունքներով /Generally Accepted Risk Principles – GARP/: Հաշվի առնելով բանկի գործունեության բնույթը և ծավալները, բանկում առանձնահատուկ ուշադրության են արժանանում հետևյալ կարևորագույն ռիսկերը.

- ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ
- ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՌԻՍԿ
- ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՌԻՍԿ
- ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ
- ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ



**ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ**

Վարկային ռիսկը փոխառուի ֆինանսական վիճակի վատթարացումն է, որի հետևանքով անհնար է դառնում պարտավորությունների կատարումը և առաջանում է վարկը չվերադարձնելու ռիսկ: Վարկային պորտֆելների վերաբերյալ տարատեսակ վերլուծություններն ու հաշվետվությունները, վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման քաղաքականությունը, ինչպես նաև սթրես-թեստերը հնարավորություն են ընձեռում առավելագույնի հասցնել վարկային ռիսկերի կառավարման արդյունավետությունը: Բանկն, ունենալով Ռիսկերի կառավարման գործուն համակարգ, պատշաճ կերպով կառավարել է բանկին բնորոշ վարկային ռիսկերն իր կողմից ընդունելի ռիսկ-ախորժակի շրջանակներում:




**ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՌԻՍԿ**

Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններից: Բանկի գրեթե բոլոր ակտիվներն ու պարտավորությունները ֆիքսված տոկոսադրույքով են: Այնուամենայնիվ այդ դեպքում կարող են առաջանալ ռիսկեր, կապված բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետների անհամապատասխանության հետ: Տոկոսադրույքի ռիսկը գնահատելու համար օգտագործվում են GAP վերլուծությունը և դյուրացիայի մեթոդը: Նշված ռիսկերը զսպելու համար բանկում վարվում է ռիսկերը նվազեցնող գնագոյացման համապատասխան քաղաքականություն:



**ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՌԻՍԿ**

Արտարժույթային ռիսկը կարող է առաջանալ փոխարժեքի ոչ բարենպաստ տատանումներից: Արտարժույթային ռիսկը գնահատելու համար բանկն օգտագործում է VAR /value at risk/ մեթոդը և GAP վերլուծությունը, ինչպես նաև տարբեր սթրես-թեստեր, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու արտարժույթային ռիսկի ազդեցությունը բանկի շահութաբերության և տնտեսական նորմատիվների վրա: Վերլուծության համաձայն, բանկում արտարժույթային ռիսկը գնահատվել է ցածր մակարդակի վրա:



# ԷԼԲՐՈՒՍ

(5642մ)

Եվրոպայի և Ռուսաստանի ամենաբարձր լեռնագագաթը:  
Այն գտնվում է Կովկասում, առաջին անգամ նվաճվել է  
1829 թվականին:

## ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

Իրացվելիությունը բանկի՝ իր կողմից ստանձնած ֆինանսական և այլ պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու ընդունակությունն է, իսկ իրացվելիության ռիսկը բանկի կողմից այդ պարտավորությունների ամբողջ ծավալով կատարելու անկարողության արդյունքում հնարավոր կորուստների ռիսկն է: Իրացվելիության ռիսկը առաջանում է բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հոսքի անհամապատասխանությունից և/կամ չնախատեսված դեպքերում /շոկ/ բանկի կողմից անմիջապես և միանվագ կերպով իր պարտավորությունների կատարման անհրաժեշտության արդյունքում:

Իրացվելիության կառավարման համար բանկն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- իրացվելիության կառավարում՝ ամենօրյա և անընդհատության հիմունքներով,
- բանկում իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության հստակ տարանջատում ստորաբաժանումների միջև,
- բանկի գործունեության ծավալներին և առանձնահատկություններին համարժեք իրացվելիության մակարդակի սահմանաչափերի սահմանում:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով առանձնահատուկ ուշադրություն է դարձվում սթրես թեստերի կիրառմանը, երբ գնահատվում է բանկի կողմից ներգրավված միջոցների անսպասելի /ժամկետից շուտ/ արտահոսքի ազդեցությունը բանկի իրացվելիության նորմատիվների վրա:

## ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Գործառնական ռիսկն արտաքին գործոնների, ներքին գործընթացների, համակարգերի և մարդկային գործոնի արդյունքում առաջացող կորուստների հավանականությունն է, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա:

Բանկը գործառնական ռիսկի կառավարման նպատակներին և խնդիրներին հասնում է հետևյալ մեթոդների և սկզբունքների կիրառմամբ՝

«Պաշտպանական երեք գծերի մոդել»-ն իր մեջ ներառում է հիմնական երեք մակարդակները.

- 1.աշխատակիցների կողմից իրենց գործունեության ընթացքում անմիջական պատասխանատվություն գործառնական ռիսկի կառավարման համար,
- 2.ռիսկի կառավարման և վերահսկման գործառույթներ /ռիսկերի կառավարման տնօրինություն, ներքին աուդիտ/,
- 3.ռիսկերի ռազմավարական վերահսկողություն /Բանկի Խորհուրդ և Վարչություն/:

Գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման համար բանկը կիրառում է հետևյալ հիմնական սկզբունքները.

- գործառնական ռիսկի բացահայտման, վերլուծության, դասակարգման և մոնիտորինգի արդյունավետ համակարգի ներդրում,
- սահմանաչափերի ներդրում,
- իրավասությունների և որոշումների կայացման համակարգի ներդրում,
- տեխնոլոգիական համակարգի ներդրում,
- վերահսկման արդյունավետ համակարգի ներդրում:

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2016 թվականին Յունիբանկը շարունակել է ակտիվ ներդրումներ կատարել բանկի ավտոմատացման համակարգերի թարմացման և սպասարկման հեռահար ուղղությունների զարգացման նպատակով: Մանրաձախ ուղղության դինամիկ զարգացումը, բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնումը և իննովացիոն լուծումների կիրառումը ենթադրում են IT ենթակառուցվածքի ապահով աշխատանք բոլոր բիզնես գործընթացներում:

Հաշվետու տարում Յունիբանկն անցում կատարեց «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ընկերության կողմից մշակված նոր CRM համակարգին: Proto-CRM-ը, որը ներդրեց Յունիբանկը, պատկանում է CRM-համակարգերի նոր սերնդին, որի ամպային համակարգը հնարավորություն է տալիս լուծելու բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջանում են մեծ քանակով հաճախորդներ ունեցող ընկերությունների մոտ, օրինակ՝ հաճախորդային բազայի վարումը մեկ համակարգում, վաճառքների ուղու կառուցումը, անվճար և արդիական վերլուծության տրամադրումը ցանկացած ժամանակ:

Protobase Loanstation մոդուլը (վարկավորման գործընթացի ավտոմատացում) թույլ է տալիս Յունիբանկին առավել արդյունավետ գնահատել հաճախորդի վարկունակությունը, կառուցել

հաճախորդի պրոֆիլը՝ հիմնվելով սեփական վիճակագրական բազայի վրա, և բացառելով մարդկային գործոնը վարկի վերաբերյալ որոշում կայացնելիս: Դրա հետ մեկտեղ, վարկային հայտի վերաբերյալ որոշումը կայացվում է ընդամենը մեկ րոպեում:

2016 թվականին Յունիբանկն ամբողջովին ավարտեց Տվյալների մշակման ժամանակակից կենտրոնի ստեղծումը, որը հիմնված է հեռահաղորդակցման ոլորտում խոշորագույն ընկերություններից մեկի՝ Huawei-ի համալիր լուծման վրա: Կենտրոնն իրենից ներկայացնում է ունիվերսալ տեղեկատվական ենթակառուցվածք, որը տարբերվում է տեղեկատվության պաշտպանվածության և ապահովության բարձր մակարդակով:

Յունիբանկի տվյալների մշակման կենտրոնը նախատեսված է սերվերային և կոմունիկացիոն սարքավորումների տեղաբաշխման համար և կարող է պահել և մշակել բանկային տեղեկատվության հսկայական ծավալներ: Այն առանձնանում է իր շարժականությամբ և ֆորս մաժորային իրավիճակներում կարող է հեշտությամբ տեղափոխվել բանկի համար նախընտրելի այլ վայր: Անխափան սնուցման աղբյուրները կախված չեն

քաղաքային էլեկտրացանցերից և ապահովում են ավտոնոմ աշխատանք:

Յունիբանկը մշտապես համահունչ է քայլել ժամանակի հետ և ակտիվ զարգացրել է հեռահար սպասարկման ուղիները՝ պարզեցնելով բանկային սպասարկման գործընթացը և, այդ կերպ, խնայելով իր հաճախորդների ժամանակը: Հաշվետու տարում բանկը սկսեց մոբայլ բանկինգ համակարգի ներդրման ուղղությամբ աշխատանքները՝ հնարավորություն տալով հաճախորդներին կառավարել իրենց հաշիվները բջջային հեռախոսների միջոցով: Ծրագիրն աշխատում է iOS և Android օպերացիոն համակարգերի հիման վրա և օգտագործման համար շատ պարզ է և հարմար: Յունիբանկի մոբայլ բանկինգ ծրագիրը հնարավորություն է տալիս հաճախորդներին իրականացնել վճարումներ, վարկի մարումներ, համալրել հաշիվը և վճարել ծառայությունների դիմաց, այդ թվում՝ կատարել կոմունալ վճարումներ: Օգտվելով մոբայլ բանկինգ ծրագրից, հաճախորդը միշտ տեղյակ կլինի իր հաշիվներում առկա դրամական միջոցների շարժից և կարող է հետևել բոլոր գործարքներին:

Մոբայլ բանկինգն անընդհատ մեծացնում է հնարավորությունները և ապագայում ձգտում է


լիարժեք փոխարինել հաճախորդի կողմից բանկ այցելելը:

Յունիբանկը մեծ ուշադրություն է հատկացնում նաև տեղեկատվական անվտանգությանը և կիրառանվտանգության խնդիրներին: Բանկը ներդրել է ISO 27001:2013 միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ, ինչպես նաև ձեռք է բերել PCI DSS (PCI Data Security Standard) ստանդարտի պահանջներին համապատասխանելիության հավաստագիր:

ISO 27001:2013 ստանդարտի հավաստագիրը փաստում է, որ տեղեկատվական անվտանգության ապահովումը Յունիբանկում գտնվում է բարձր մակարդակի վրա և արդյունավետ կառավարվում ու վերահսկվում է:

2016 թվականին Յունիբանկը հաջողությամբ անցել է նաև PCI PIN Security 2.0 ստանդարտի պահանջներին համապատասխանության գործընթացը և ստացել միջազգային հավաստագիր: PCI PIN Security 2.0 հավաստագրի առկայությունը երաշխավորում է, որ բանկում քարտերի PIN-կոդերի տրամադրման գործընթացն իրականացվում է Visa միջազգային վճարային համակարգի անվտանգության ամենախիստ պահանջներին համապատասխան:





# ՊՈՒՆՉԱԿ ԶԱՅԱ

(4884մ)

Ավստրալիայի և Օվկանիայի ամենաբարձր լեռը: Այն գտնվում է  
Նոր Գվինեայում, առաջին նվաճումը եղել է 1962 թվականին:

## ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ

Այսօր Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում է 47 մասնաճյուղ և ներկայացուցչություն Մոսկվայում: Բանկը մեծ ուշադրություն է հատկացնում մասնաճյուղային ցանցի ընդլայնմանն ու կորպորատիվ ստանդարտների ներդրմանը՝ որակյալ բանկային ծառայությունների մատուցման նպատակով:

Հաճախորդների սպասարկման բարելավման նպատակով, Յունիբանկն անցում է կատարում «մեկ պատուհանի» սկզբունքով աշխատանքի: Արդյունքում մի քանի անգամ մեծացել է հաճախորդների սպասարկման արագությունը և բարձրացել մասնաճյուղերի աշխատանքի արդյունավետությունը: Բանկի բոլոր մասնաճյուղերում և առևտրի խոշոր կետերում տեղադրված են վճարային տերմինալներ, որոնց միջոցով հաճախորդները ինքնուրույն կատարում են բանկային հաշվի համալրում, վարկի մարում և կոմունալ վճարումներ: 2016 թվականի արդյունքներով տերմինալների քանակը կազմել է 103, գործարքների տարեկան ծավալը՝ մոտ 11.5 մլրդ դրամ:

Յունիբանկը մշտապես մեծ ուշադրություն է հատկացրել նաև մասնաճյուղերի ընդլայնմանն ու տարածքների բարելավմանը, հատկապես՝ ծառայությունների հասանելիության և սպասարկման որակի բարձրացման առումով: Այդպիսով բանկն իրագործում է բանկային ծառայությունները հաճախորդից «մեկ քայլ» հեռավորության վրա

մատուցելու սկզբունքը՝ ապահովելով դրանց հասանելիությունը բնակչության առավել մեծ զանգվածի համար:

2016 թվականին Յունիբանկը սկսել է իրագործել մասնագիտացված մասնաճյուղերի ստեղծման կոնցեպցիան, որի շրջանակներում արդեն իսկ բացվել է «Պարույր Սևակ» մասնաճյուղը՝ նախատեսված միայն ֆիզիկական անձ հաճախորդների համար:

Համապատասխան եկամտի մակարդակ և կարգավիճակ ունեցող հաճախորդներին Յունիբանկն առաջարկում է լիարժեք ֆինանսական լուծումներ, որոնք ներառում են կապիտալի կառավարում, արդյունավետ ֆինանսական պլանավորում և ներդրումային ռազմավարության մշակում: Unibank Privé -ի սպասարկման բոլոր փուլերում հաճախորդի հետ աշխատում է անհատական ֆինանսական մենեջերը, որը պատրաստ է աջակցություն ցուցաբերել ցանկացած հարցի դեպքում:

Unibank Privé-ի հաճախորդ կարելի է դառնալ՝ ձևակերպելով առնվազն 20 մլն ՀՀ դրամ, 50,000 ԱՄՆ դոլար/եվրո կամ ռուսական ռուբլուն համարժեք գումարով ավանդ կամ հաշվի չնվազող մնացորդ: 2016 թվականի արդյունքներով Unibank Privé հաճախորդների ավանդային պորտֆելը գերազանցել է 10.2 մլրդ ՀՀ դրամ: Բոլոր գործարքների անվտանգությունն ու գաղտնիությունը երաշխավորվում են:



UNIBANK | PRIVÉ



բացառիկ  
մոտեցում  
**յուրաքանչյուր**  
հաճախորդի նկատմամբ

Unibank Privé-ի ծառայությունները ներառում են՝

•  
Եկամտաբեր «Privé» ավանդ

•  
VISA Gold և Infinite բազմարժույթային քարտեր

•  
«U-Privé» վարկային գիծ

•  
Privé միջազգային կոնսիերժ ծառայություն

•  
Visa CEMEA (UK) Ltd միջազգային ապահովագրություն

•  
PriorityPass ծառայություն՝ աշխարհի 120 երկրների  
օդանավակայանների 900 VIP-սրահներ մուտքի իրավունքով

•  
անվճար SIM քարտ շահավետ ռոումինգի համար


•  
դեպոզիտար արկղեր  
•

Յունիբանկը կշարունակի ակտիվորեն զարգացնել այս ուղղությունը՝ մշտապես բարելավելով սպասարկման որակը և առաջարկելով նոր ծառայություններ և արտոնություններ:



## ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻԴՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յունիբանկի հիմնական նպատակներն են ՀՀ բանկային համակարգում իր դիրքերի ամրապնդումը, բիզնեսի ծավալների աճը և բարձր շահութաբերություն ունեցող ուղղությունների զարգացումը, գործունեության արդյունավետության բարձրացումը՝ ժամանակակից տեխնոլոգիաների և կառավարման մեթոդների ներդրման, ավտոմատացման, մասնաճյուղային ցանցի և վաճառքների ուղիների ընդլայնման և հաճախորդամետ քաղաքականության միջոցով:





## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### *Կորպորատիվ կառավարման համակարգի ընդհանուր նկարագիրը*

Բանկում գործում է լիարժեք կորպորատիվ կառավարման կառուցվածք, որը ներառում է Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Բանկի Խորհուրդը, Բանկի Վարչությունը, Ներքին աուդիտը, Խորհրդին կից Հանձնաժողովները, Վարչությանը կից Հանձնաժողովները, Վարկային կոմիտեն և Պահուստների կառավարման Կոմիտեն: Բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը, կայացնում է որոշումներ Բանկի գործունեության հիմնական հարցերի վերաբերյալ: Բաժնետերերի ընդհանուր ժողովն անց է կացվում ամեն տարի: Խորհրդի որոշմամբ նաև կարող է գումարվել արտահերթ ժողով: Բաժնետերերի ընդհանուր ժողովի ամսաթիվը սահմանում է Խորհուրդը: Բանկը տեղեկացնում է բաժնետերերին Ընդհանուր ժողովի անցկացման մասին՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելով հաղորդագրություն ոչ ուշ, քան 15 օր առաջ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից և 30 օր առաջ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվից: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները նույն կարգով տեղեկացվում են բաժնետերերին: Բանկի Խորհուրդը հանդիսանում է Բանկի կառավարման կոլեգիալ մարմինը, որը սահմանում է Բանկի գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունները երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև՝ ներքին վերահսկողության կազմակերպման մոտեցումները: Բանկի Խորհուրդը, իրականացնելով իր գործունեությունը, հաշվետու

է Բաժնետերերի ընդհանուր ժողովին, գործում է Բանկի և բաժնետերերի շահերի համաձայն, ինչպես նաև ապահովում է բոլոր այլ շահագրգիռ անձանց շահերը և օրինական պահանջները: Բանկի Վարչությունն իրականացնում է ընթացիկ, օպերացիոն գործունեության ղեկավարումը լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ: Վարչությունը հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին և Բանկի Խորհրդին: Ներքին աուդիտն ունի անկախ կարգավիճակ, գործում է Խորհրդի անմիջական հսկողության ներքո: Իրականացնում է Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության ստուգում և գնահատում:

### **ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ**

Ներդրումային հանձնաժողովը հանդիսանում է խորհրդատվական-խորհրդակցական մարմին, որն ապահովում է նախնական ներդրումային նախագծերի և ծրագրերի քննարկումը, ինչպես նաև Բանկի ներդրումային քաղաքականության բարելավումը: Տարվա ընթացքում գումարվել է 5 նիստ:

Աուդիտի և ռիսկերի հանձնաժողովն ապահովում է ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման ներքին վերահսկողության համակարգերի արդյունավետության բարձրացումը: Տարվա ընթացքում գումարվել է 5 նիստ:

Պարզևատրումների հանձնաժողովը սահմանում և Խորհրդի հետ համաձայնեցնում է Բանկի բարձրագույն ղեկավարության անդամների

պարզևատրումների ընդհանուր սկզբունքները և քաղաքականությունը, աջակցում է Բանկի կադրային քաղաքականության և անձնակազմի մոտիվացիոն սխեմայի կատարելագործմանը: Տարվա ընթացքում գումարվել է 4 նիստ:

## **ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ**

Ակտիվների և պասիվների կառավարման և Սակագնային հանձնաժողովի իրականացում է Բանկի հաշվեկշռի կառուցվածքի կառավարման ոլորտում Բանկի գործունեության համակարգումը, ակտիվների և պասիվների ծավալների ըստ ժամկետների և եկամտաբերության օպտիմալ հարաբերակցության հասնելու նպատակով, անց է կացնում Բանկի իրացվելիության կարգավիճակի մոնիտորինգ, ռեսուրսների տեղաբաշխումն առաջնային բիզնես ուղղություններով, սահմանում է առավել ռացիոնալ ֆոնդավորման ձևեր ու կառուցվածքներ: Բանկային գործիքների համար համակարգում է գնային քաղաքականության և սակագնային ցանցի ձևավորումը: Տարվա ընթացքում գումարվել է 47 նիստ: Տեղեկատվական Տեխնոլոգիաների և Տեղեկատվական Անվտանգության հանձնաժողովը համակարգում է բանկային տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և արդիականացման ոլորտում Բանկի քաղաքականության և ռազմավարության մշակման հետ կապված աշխատանքները, աջակցում է ավելի կատարելագործված տեխնոլոգիաների ներդրմանը, ավտոմատացմանը, որի նպատակն է բարձրացնել հաճախորդների սպասարկման որակը և օպտիմալացնել առկա տեխնոլոգիաները: Հանձնաժողովի իրականացում է տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգի կառավարումը, որի նպատակն է ապահովել Բանկի տեղեկատվական ակտիվների անվտանգությունը, համաձայն միջազգային չափանիշների և ներքին

կանոնակարգերի: Տարվա ընթացքում գումարվել է 7 նիստ:

Անձնակազմի գնահատման հանձնաժողովի ապահովում է Բանկի պարզևատրումների և խրախուսումների արդյունավետ և թափանցիկ պրակտիկայի ձևավորումը, կարգապահական միջոցների կիրառումը, իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար իրականացնում է առանցքային ստորաբաժանումների աշխատանքների գնահատումը: Տարվա ընթացքում գումարվել է 22 նիստ:

Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողովը որոշումներ է ընդունում մաշված և հետագա շահագործման ոչ ենթակա լինելու գույքի դուրս գրման վերաբերյալ՝ ըստ տարեկան և միջանկյալ գույքագրման արդյունքների: Տարվա ընթացքում գումարվել է 11 նիստ:

Վարկային կոմիտեն վարկառուի վարկունակության և վճարունակության վերլուծության հիման վրա, հավատարիմ մնալով Բանկի վարկային քաղաքականության հիմնական սկզբունքներին, ընդունում է որոշում իր լիազորությունների սահմաններում վարկային գործարքների իրականացման հնարավորության և դրանց պայմանների վերաբերյալ, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ (ժամկետների երկարաձգում, պայմանների փոփոխություն և այլն): Տարվա ընթացքում գումարվել է 54 նիստ:

Պահուստների կառավարման հանձնաժողովը Բանկի վարկային պորտֆելի կարգավիճակի վերլուծության հիման վրա, վերանայում է Բանկի վարկային պորտֆելի առողջացման ուղիները վերակազմավորման և վարկային պարտավորությունների վերաֆինանսավորման

ճանապարհով: Հանձնաժողովը իրավասու է որոշակի սահմաններում ընդունել որոշումներ կամ Խորհրդին ներկայացնել առաջարկություններ վարկային պարտքի ներման վերաբերյալ: Տարվա ընթացքում գումարվել է 50 նիստ:

Բանկում հաստատված է ներքին փաստաթուղթ՝ “Կորպորատիվ մշակույթի քաղաքականությունը”, որը սահմանում է ղեկավարության և անձնակազմի, պետական մարմինների փոխհարաբերությունները, գործարար էթիկան և շահերի բախումը:

### **Շահութաբաժնային քաղաքականություն**

Բանկի հիմնական բաժնետերերի իրավունքների մեջ ներառվում է շահութաբաժինների տեսքով Բանկի զուտ շահույթից բաժնեմաս ստանալու իրավունքը: Շահութաբաժնային քաղաքականությունն ուղղված է շահութաբաժնային չափերի որոշման ժամանակ ապահովելու Բանկի և բաժնետերերի շահերի հավասարակշռությունը, ինչպես նաև բարձրացնելու Բանկի ընթացիկ ներդրումային գրավչությունը և ապահովելու իր կապիտալիզացիայի աճը: Շահութաբաժին է հանդիսանում Բանկի շահույթի բաժնեմասը, որը համամասնորեն բաշխված է բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի քանակի և տեսակի միջև: Բանկն իրավունք ունի տարվա ֆինանսական արդյունքներով որոշում ընդունել շահութաբաժինների վճարման մասին՝ ըստ տեղաբաշխված բաժնետոմսերի: Շահութաբաժինների վճարման որոշումն ընդունվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ Բանկի Խորհրդի առաջարկությամբ: Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովը սահմանում է շահութաբաժինների չափը: Բանկի Խորհուրդը կարող է որոշում ընդունել միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ և սահմանել դրանց չափը, պայմանները և վճարման կարգը:

### **Տեղեկատվության բացահայտում**

Բաժնետերերին, հաճախորդներին, զանգվածային լրատվության միջոցներին, պետական մարմիններին և այլ շահագրգիռ անձանց համար տեղեկատվության ժամանակին և համալիր բացահայտումը բանկն իրականացնում է «Օրենսդրության պահանջների համաձայն, ինչպես նաև՝ հաշվի առնելով կորպորատիվ կառավարման տեղական և միջազգային պրակտիկան:

Տեղեկատվությունը բացահայտելիս բանկն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝

- հուսալիություն,
- օրինաչափություն,
- օպերատիվություն,
- զաղտնիություն,
- տեղեկատվություն ստացող կողմի

իրավունքների պահպանում:

Բանկը հավատարիմ է մնում իր գործունեության մասին բաժնետերերին և պոտենցիալ ներդրողներին հավաստի տեղեկատվության բավարարման սկզբունքին, որը կարող է օգտակար լինել ներդրումային և կառավարչական որոշումների ընդունման համար: Բանկը բացահայտում է տեղեկատվությունը տարեկան հաշվետվության ձևով, եռամսյակային հաշվետվություններով, փոխկապակցված անձանց ցուցակներով, էական այլ փաստերի հաղորդագրություններով, որոնք ենթակա են բացահայտման արժեթղթերի շուկայում, արժեթղթերի ազդագրով, տարեկան հաշվապահական հաշվետվություններով և այլ տեղեկություններով, որոնք ենթակա են պարտադիր բացահայտման բաժնետիրական ընկերությունների կողմից: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում, որ ցանկացած կարևոր տեղեկատվություն միաժամանակ հասանելի դառնա բոլոր բաժնետերերին և վերլուծաբաններին, հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներին համաձայն:



# ՎԻՆՍՈՆ ԼԵՌՆԱԶԱՆԳՎԱԾ (4897մ)

Անտարկտիդայի ամենաբարձր լեռը: Այն համարվում է Էլստորտ լեռնաշղթայի մաս և առաջին անգամ նվաճվել է 1966 թվականին:





## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

---

Սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն Յունիբանկը մշտապես ամենագործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում՝ իր ուժերն ուղղորդելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Յունիբանկը տնտեսական և սոցիալական ծրագրերի պատասխանատու մասնակից է: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱ

---

Բանկում փոխգործակցությունը կառուցված է անհատի հարգանքի և արդյունքին հասնելու հիման վրա՝ նպատակ ունենալով հաջող կերպով լուծելու մասնագիտական խնդիրները և պահպանելու կառուցողական հարաբերությունները անձնակազմում: Մենք աշխատում ենք համապատասխանել գործարար էթիկայի սկզբունքներին, պահպանելով գործող օրենքները, ինչպես նաև բանկում սահմանված նորմերն ու կանոնները:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

---

Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է հետևել շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին: Վարկավորման ծրագրերի իրականացման ժամանակ բանկը հաշվի է առնում շրջակա միջավայրի պաշտպանության ստանդարտների համապատասխանության փաստը և նախապատվություն է տալիս էկոլոգիապես մաքուր ապրանքների արտադրությանն ու ռեսուրսախնայող գործունեություն իրականացնող ծրագրերի վարկավորմանը: Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է նվազագույնի հասցնել այն նախագծերի ֆինանսավորումը, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա:



## ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2016թ. բանկը ընդլայնել է համագործակցությունը միջազգային կառույցների հետ: Շարունակվել են աշխատանքները Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) և Առևտրի և զարգացման Սևծովյան բանկի (BSTDB) հետ, որի շրջանակներում փոքր ու միջին բիզնեսի ձեռնարկությունների երկարաժամկետ ֆինանսավորման համար մշակվել են մի շարք վարկային գործիքներ շահավետ պայմաններով, մասնավորապես առավել ցածր տոկոսադրույքով և ավելի երկար ժամկետով:

2016 թվականին բանկը շարունակել է համագործակցությունը նաև Եվրոպական ներդրումային բանկի (EIB) հետ, որի շրջանակներում մշակվել են վարկային գործիքներ՝ նախատեսված գյուղատնտեսության, վերամշակման, զբոսաշրջության և սպասարկման ոլորտներում գործունեություն իրականացնող ձեռնարկությունների ֆինանսավորման համար:

2016 թվականին բանկը համագործակցություն սկսեց Գերմանա-հայկական հիմնադրամի և գերմանական KfW բանկի (Kreditanstalt für Wiederaufbau) հետ: Համագործակցության շրջանակներում մշակվել է նոր վարկային գործիք՝ ուղղված ՓՄՁ և միկրո ձեռնարկությունների էներգաարդյունավետության բարձրացմանը:

Տարվա ընթացքում բանկը շարունակել է համագործակցությունը նաև Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ՓՄՁ ՋԱԿ-ի հետ: Միջազգային կառույցների

հետ համագործակցության շնորհիվ, բանկը հնարավորություն է ստանում ընդլայնելու բիզնես վարկավորման ծրագրերը՝ բարձրացնելով վարկային միջոցների հասանելիության մակարդակն ավելի մեծ թվով ձեռնարկատերերի համար: Տարեվերջին նախնական բանակցային գործընթաց է սկսվել նաև Եվրասիական Ջարգացման Բանկի, ՎՋԵԲ-ի (EBRD), FMO և Blue Orchard Microfinance Fund-ի հետ:

Շարունակվել է համագործակցությունը Moody's Investors Service միջազգային վարկանշային գործակալության հետ: Moody's Investors Service միջազգային գործակալությունը 2017թ.-ի մարտին վերանայել և բարձրացրել է Յունիբանկի վարկանիշը՝ սահմանելով B2 դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար: Moody's գործակալության կողմից վարկանիշի բարձրացումը հիմնականում պայմանավորված է վերջին շրջանում Յունիբանկի կապիտալի զգալի համալրմամբ և ակտիվների որակի բարելավմամբ:

### ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

- 2016 թվականի ապրիլին Յունիբանկը ավարտեց բաժնետոմսերի 2-րդ և 3-րդ թողարկման տեղաբաշխումը, համապատասխանաբար, 5.3 մլրդ ՀՀ դրամի և 2.8 մլրդ ՀՀ դրամի չափով:
- 2016 թվականի դեկտեմբերին Յունիբանկը ավարտեց բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխումը՝ 3.3 մլրդ ՀՀ դրամի չափով:

Բոլոր տեղաբաշխումներն իրականացվել են

ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ-ում: Տեղաբաշխման ընթացքում բաժնետոմսի գինը կազմեց 230 ՀՀ դրամ, բաժնետոմսի անվանական արժեքը՝ 100 ՀՀ դրամ:

Յունիբանկի Խորհուրդը 2016թ.-ի դեկտեմբերի 9-ի նիստում որոշում ընդունեց բանկի սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին վճարել միջանկյալ շահութաբաժիններ հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի համար՝ սովորական անվանական բաժնետոմսերի տեսքով՝ 4348 հատ /տեղաբաշխման ժամանակ ձեռքբերման նվազագույն փաթեթի քանակ/ բաժնետոմսի դիմաց 420 բաժնետոմս հաշվարկով, որը համարժեք է 12.9% տարեկան եկամտաբերության: Բաժնետոմսերի տեսքով շահութաբաժինների վճարման համար բանկը իրականացրեց սովորական անվանական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ բաժնետոմսի շուկայական արժեքով մոտ 3,2 մլրդ ՀՀ դրամ ծավալով:

2016թ.-ի հունիսին Յունիբանկը հաջողությամբ ավարտեց 8% տարեկան եկամտաբերությամբ, 24 ամիս շրջանառության ժամկետով դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գործընթացը: Արժեկտրոնային եկամտի վճարումն իրականացվում է եռամսյակային պարբերականությամբ, թողարկման ծավալը կազմում է 5 մլն ԱՄՆ դոլար: Անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվեցին ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ-ում և ընդգրկվեցին պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում: 2017թ.-ի փետրվարին Յունիբանկը թողարկեց դրամային պարտատոմսեր, որոնց տարեկան եկամտաբերությունը կազմում է 13.5%, շրջանառության ժամկետը՝ 24 ամիս, արժեկտրոնային եկամտի վճարումն իրականացվում է եռամսյակային պարբերականությամբ, թողարկման ծավալը

կազմում է 200 մլն ՀՀ դրամ:

Ներդրողների հետ արդյունավետ փոխգործակցության համար 2016 թվականին իրականացվեցին մի շարք լայնածավալ միջոցառումներ: Բանկի ղեկավարությունը ակտիվ կերպով մասնակցեց ոչ նշանակալի մասնակցություն ունեցող բաժնետերերի հետ հանդիպումներին և մանրամասն տեղեկատվություն տրամադրեցին բանկի ֆինանսական վիճակի, շուկայում զբաղեցրած դիրքի, ռազմավարության և կանխատեսվող ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ: Բանկի առաջնահերթ խնդիրներից է նաև ներդրողների և անալիտիկ խմբի փոխգործակցությունը, որի նպատակն է առավելագույն կերպով տեղեկացնել բաժնետերերին բանկի գործունեության արդյունքների և այն գործոնների և պայմանների վերաբերյալ, որոնք կարող են ազդել բանկի գործունեության վրա:

2016 թվականի ընթացքում Բանկը նախաձեռնեց նաև “Ժողովրդական բանկ” հեռուստածրագիրը, որն ուղղված է բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը և հաճախորդներին բանկային ծառայությունների մանրամասն ներկայացմանը: Բանկը շարունակում է նաև հեռահար հաղորդակցության զարգացումը բաժնետերերի և ներդրողների հետ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ինտերնետային ռեսուրսների հետագա զարգացմանը՝ ընդլայնելով Բանկի ներկայությունը սոցիալական ցանցերում (Facebook, Twitter, LinkedIn) և հետամուտ լինելով հետադարձ կապի և Տեղեկատուի միջոցով ստացված հարցումների արագ արձագանքմանը: Յունիբանկն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում բաժնետերերի և ներդրողների հետ հետադարձ կապի ապահովմանը: Մանրամասն տեղեկություններին կարող եք ծանոթանալ [www.unibank.am](http://www.unibank.am) (Բաժնետերեր և ներդրողներ) և [corp.unibank.am](http://corp.unibank.am) կայքերում:

## ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ և ԱՌԻԴԻՏ

Բանկի ներքին հսկողությունը և աուդիտը գործում են միջազգային լավագույն փորձի հիման վրա և ամբողջովին համապատասխանում են ինչպես ՀՀ օրենսդրության պահանջներին, այնպես էլ ՀՀ Կենտրոնական բանկի իրավական և նորմատիվ ակտերին:

### *Ներքին հսկողություն*

Բանկի ներքին հսկողության համակարգը ապահովում է՝

- բանկի գործունեության արդյունավետությունը,
  - ակտիվների և պասիվների կառավարման արդյունավետություն /ներառյալ՝ ակտիվների պահպանվածություն/ և ռիսկերի կառավարումը,
  - տեղեկատվական անվտանգությունը,
  - ֆինանսական և կառավարչական տեղեկատվության և հաշվետվության ճշգրտությունը, ամբողջականությունը և ժամանակին տրամադրումը,
  - օրենսդրության, նորմատիվ ակտերի, կանոնների և ստանդարտների պահանջների պահպանումը:
- Բանկի ներքին հսկողության և աուդիտի հիմնախնդիրներն են՝
- ներքին հսկողության համակարգերի արդյունավետության, ռիսկերի կառավարման, հաշվա-

պահական հաշվառման և հաշվետվության, բիզնես գործընթացների, ստորաբաժանումների և աշխատակիցների արդյունավետության, ինչպես նաև իրականացվող գործառնությունների և գործարքների արդյունավետության անկախ գնահատումը,

- հիմնական ռիսկային ոլորտների և ստուգող մեխանիզմների մոնիտորինգը, ներքին հսկողության համակարգի թերությունները, նոր ռիսկերը բացահայտելու նպատակով, ինչպես նաև ռիսկային դեպքերի մասին նախազգուշացման համար կանխիչ մեխանիզմների ստեղծումը,

- համակարգերի, գործընթացների, ընթացակարգերի, գործարքների և ստորաբաժանումների ու աշխատակիցների գործունեության արդյունավետության աճի նպատակով խորհրդատվության մշակումը,

- արտաքին վերահսկման մարմինների և արտաքին աուդիտորների արդյունավետ փոխգործողության կազմակերպումը:

Բանկի ներքին հսկողության մարմինների համակարգը ներառում է՝

- բանկի կառավարման մարմինները /բաժնետերերի Ընդհանուր ժողով, Բանկի Խորհուրդ, Բանկի Վարչություն/, քումփլայենսը,
- մասնաճյուղերի ղեկավարներ /իրենց տեղակալ-

ները/, գլխավոր հաշվապահներ կամ մասնաճյուղերի օպեր. մենեջերներ,

•բանկի կառուցվածքային ստորաբաժանումներ /պատասխանատու աշխատակիցները/, ովքեր իրականացնում են ներքին հսկողություն:

### *Ներքին աուդիտ*

Աշխատանքի արդյունավետության ապահովման նպատակով կառավարման մարմիններին աջակցություն ցուցաբերելու համար բանկում գործում է Ներքին աուդիտը: Ներքին աուդիտը իրականացնում է ներքին հսկողության համակարգի մոնիտորինգ, աուդիտորական ստուգումներ, ինչպես նաև տրամադրում է անկախ հանձնարարականներ բանկային գործունեության բարելավման համար: Ներքին աուդիտը հանդիսանում է բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում և ուղղակիորեն հաշվետու է բանկի Խորհրդին: Բանկի Խորհուրդը հաստատում է Ներքին Աուդիտի աշխատանքային ծրագրերը, վերահսկում է դրանց կատարումը, ուսումնասիրում է Ներքին աուդիտի հաշվետվությունները աուդիտորական ստուգումների և ներքին հսկողության համակարգի մոնիտորինգի արդյունքների, ինչպես նաև հայտնաբերված

թերությունների վերացմանն ուղղված Ներքին աուդիտի հանձնարարականների կատարման վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններն են՝

- ներքին հսկողության համակարգի արդյունավետության ստուգումն ու գնահատումը,
- բանկային ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության ստուգումը,
- ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև կարգավորող և վերահսկող մարմինների կարգավորող իրավական ակտերին համապատասխանության ստուգումը,
- հաշվապահական հաշվառման հաշվետվությունների արժանահավատության, ամբողջականության, օբյեկտիվության և ներկայացման ժամկետների համապատասխանության ստուգումը:

Ներքին աուդիտը ներքին հսկողության համակարգի, ինչպես նաև արտաքին աուդիտի ստուգման ժամանակահատվածում Ներքին աուդիտի կողմից արձանագրված հիմնական թերությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման նպատակով համագործակցում է Աուդիտի կոմիտեի, Բանկի արտաքին աուդիտի, և ՀՀ Կենտրոնական Բանկի հետ:

# ՄՈՆԲԼԱՆ

(4810մ)

Եվրոպայի բարձրագույն կետը (շատերը Էլբրուսը վերագրում են Ասիային): Այն գտնվում է Ֆրանսիայի և Իտալիայի սահմանին, համարվում է Ալպյան լեռնաշղթայի մաս: Առաջին անգամ նվաճվել է 1786 թվականին, իսկ մեկ դար անց՝ 1886 թվականին, Մոնբլանի գագաթը նվաճել է Թեոդոր Ռուզվելտը:



## ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի կադրային քաղաքականությունն ուղղված է արդյունավետ և բարձր որակավորում ունեցող կադրային ներուժի ձևավորմանը, անձնակազմի ուսուցման համակարգի զարգացմանը, աշխատակիցների համար մոտիվացիոն համակարգի բարելավմանը, ինչպես նաև կորպորատիվ մշակույթի նորմերի պահպանմանը, որը ենթադրում է գործարար հաղորդակցության և սպասարկման ստանդարտների պահպանում:

Կադրային քաղաքականությունն ուղղված է անձնակազմի մանրակրկիտ ընտրությանն ու ուսուցմանը, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող կադրերի ձևավորմանը, որի շնորհիվ հնարավոր է ապահովել ծրագրված արդյունքները:

Տվյալ քաղաքականությունն իրականացվում է բանկի կորպորատիվ շահերի շրջանակներում՝ առավել փորձառու մասնագետների ներգրավման, նախաձեռնող աշխատակիցների խրախուսման և առաջխաղացման միջոցով: Հատուկ ուշադրություն է դարձվում պրոֆեսիոնալ մակարդակի աճին և օպտիմալ վարչակազմակերպչական կառուցվածքի ձևավորմանը:

Ընտրության, թեստավորման և հարցազրույցների ընթացքում առանձնացվում են պատասխանատու, առաջադեմ և նպատակասլաց մասնագետներ, որոնք կիսում են բանկի արժեքները և պատրաստ են դրանք զարգացնել: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և որակավորման մակարդակի որոշման համար բանկը պարբերաբար անցկացնում է անձնակազմի ատեստավորում և

ռոտացիաներ:

2016 թվականի աշխատանքի հիմնական ուղղություններն են՝

- բիզնես ստորաբաժանումների արդյունավետության բարձրացման նպատակով բանկի վարչակազմակերպական կառուցվածքի փոփոխությունը,
- համակարգված ուսուցման զարգացում ու աշխատակիցների որակավորման բարձրացումը,
- վերապատրաստման ծրագրերի իրականացում և Հայաստանի առաջադեմ ԲՈՒՀ-երից ուսանողների ներգրավումը:

### ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- Անձնակազմի ընտրություն
- Սեմինարների և դասընթացների կազմակերպում
- Մոտիվացիոն և խթանման ծրագրերի բարելավում
- Մասնաճյուղերի կառավարիչների լավագույն փորձի փոխանակում
- Արդյունավետ աշխատանքի համար դիպլոմների հանձնում աշխատակիցներին
- AUA Internship 2016 վերապատրաստման ծրագրի իրականացում

2016թ-ին բանկի անձնակազմի թվաքանակը կազմել է 767:

ՄԵՐ ԹԻՄԸ  
Բանկի Խորհուրդը



ԳԱԳԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ  
Խորհրդի նախագահ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի նախագահ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների Խորհրդի նախագահ, Ռուսաստանի բանկերի միության Խորհրդի անդամ, «Национальный Банковский Журнал» ամսագրի դիտող Խորհրդի անդամ, Ֆինանսական պլանավորման ինստիտուտի պրեզիդիումի անդամ: Գագիկ Զաքարյանը տարբեր տարիներին արժանացել է ֆինանսական աշխարհի մի շարք առաջատար մրցանակների, այդ թվում՝ «Լավագույն բանկիր» տիտղոսին 2005 և 2007 թվականներին: 2006 թվականին «Բիզնեսի սոցիալական պատասխանատվություն» անվանակարգում ճանաչվել է «Տարվա մարդ», իսկ 2007 թվականին բանկի արդյունավետ կառավարման համար դարձել է ՌԴ Ազգային բանկային մրցանակաբաշխության մրցանակակիր: 2008թ.-ին Գագիկ Զաքարյանն արժանացել է մրցանակի լավագույն ռուսաստանյան ապրանքանիշ ստեղծելու համար: Ռուսաստանում կայացած «Տարվա բանկ» ամենամյա մրցանակաբաշխությանը բանկային բիզնեսում ներդրած ավանդի համար ճանաչվել է «Տարվա բանկիր – 2013»: Պարգևատրվել է Հայ եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով՝ ի գնահատություն ազգոգուտ և եկեղեցաշեն գործունեության: 2015 թվականին Գագիկ Զաքարյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով: Արցախի Հանրապետությանը մատուցած ծառայությունների համար պարգևատրել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:



ԳԵՈՐԳԻ ՊԻՍՎՈՎ  
Խորհրդի անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների Խորհրդի անդամ, «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ՍՊԸ-ի Տնօրենների Խորհրդի նախագահ, Ֆինանսական պլանավորման ինստիտուտի հիմնադիր և նախագահ: Իրականացրել է մի շարք հաջող ծրագրեր Ռուսաստանում և Մեծ Բրիտանիայում: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու: «Բանկային ոլորտում տարվա մենեջեր 2003», «Ֆինանսական օլիմպ 2009» մրցանակների դափնեկիր:



ԷԴՈՒԱՐԴ ԶԱՄԱՆՅԱՆ  
Խորհրդի անդամ

«Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների Խորհրդի անդամ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ մի շարք խոշոր ֆինանսական հաստատություններում:

## Բանկի Խորհուրդը



### ՀՐԱՀԱՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Խորհրդի անդամ

«Տրանսստրոյբանկ»-ի Տնօրենների Խորհրդի նախագահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի աշխատանքային մեծ փորձ բանկային համակարգում: Պարգևատրվել է Ռուսաստանի բանկերի միության պատվոգրով՝ ռուսաստանյան բանկային համակարգում ունեցած ավանդի և բանկի հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ:



### ԱՐԱՐԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ Խորհրդի անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ Հայաստանի, Ուկրաինայի և Մալթայի մի շարք խոշոր բանկերում: 2009-2011 թվականներին ղեկավարել է Հայաստանի բանկերի միությունը:



Բանկի  
Վարչությունը



ՎԱՐԴԱՆ  
ԱՎԱԿՅԱՆ  
Վարչության նախագահ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության նախագահ, «Յունիլիզինգ» ընկերության բաժնետեր և Խորհրդի նախագահ, «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ, Հայաստանի բանկերի միության անդամ և ACRA վարկային բյուրոյի Խորհրդի անդամ: Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 23 տարի: Մասնակցել է Համաշխարհային բանկի, Union Bank of Switzerland (UBS), TACIS ծրագրի և այլ միջազգային ֆինանսական կառույցների կողմից իրականացված մի շարք միջազգային ծրագրերին: Ավարտել է Վիեննայի միացյալ ինստիտուտը (Շուկայական տնտեսության և ֆինանսական վերլուծության դասընթաց):



ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Վարչության անդամ

Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ , «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ: Տեխնիկական գիտությունների թեկնածու: Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 21 տարի: Մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի հաշվապահական հաշվառման և հարկային օրենսդրության գծով:



ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ  
Վարչության անդամ

Վարչության նախագահի տեղակալ-Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 13 տարի:



### ՕՇԱՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Վարչության անդամ

Վարչության նախագահի տեղակալ - Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետքերման գծով տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ, «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի և «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ, ՀՀ բանկերի միությանը կից Ֆինանսական արբիտրաժի արբիտր: ՀՀ բանկային համակարգում ակտիվ և արդյունավետ աշխատանքի համար պարզևատրվել է Հայաստանի բանկերի միության պատվոգրով:



### ԴԱՎԻԹ ԴԵՏՐՈՍՅԱՆ

Վարչության անդամ

Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ Տնտեսագիտական գիտությունների թեկնածու: Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 11 տարի:



### ԳՈՒՐԳԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Վարչության անդամ

Մանրաձախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ Մասնակցել է որակավորման բարձրացման մի շարք ծրագրերի, այդ թվում՝ USAID-ի և KfWբանկի:



### ՏԻԳՐԱՆ ԲԱԴԱՆՅԱՆ

Վարչության անդամի ժ/պ

Ռիսկերի կառավարման տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամի ժ/պ Ֆինանսաբանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 23 տարի:



### ՀԱՅԿ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Ներքին աուդիտի տնօրեն

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 13 տարի:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


Յունիբանկ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) ղեկավարությունը պատասխանատու է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները միջազգային ստանդարտներին համապատասխան կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանել է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար, Բանկի գործունեության անընդհատության ապահովման կարողությունը գնահատելու համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է Բանկի ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար, ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար, Բանկի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2017թ.-ի ապրիլի 26-ին:

Ստորագրված է  
Բանկի ղեկավարության անունից Վարդան Աթայան  
Վարչության նախագահ



Գոհար Գրիգորյան  
Գլխավոր Հաշվապահ

26 ապրիլ, 2107  
Երևան, Հայաստանի Հանրապետ

# ԱՆԿԱԽ ԱՌՌԻԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին.



**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**  
<<, ք. Երևան 0012  
Վաղարշյան 8/1  
<. + 374 10 260 964  
Ֆ. + 374 10 260 961  
Grant Thornton CJSC  
8/1 Vagharshyan str.  
0012 Yerevan, Armenia  
T + 374 10 260 964  
F + 374 10 260 961  
www.grantthornton.am

## *Կարծիք*

Մեր կողմից իրականացվել է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ (այսուհետ՝ «Բանկ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա

շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային

ստանդարտների (ՖՀՄՄ):

## *Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (<ՄԴ-ի Վարքագիրը) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք հանդված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

## *Առանցքային աուդիտորական հարցեր*

Մենք որոշել ենք, որ առկա չեն առանցքային աուդիտորական հարցեր, որոնք կցանկանայինք ներակայացնել մեր հաշվետվությունում:

## *Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց*

### *պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Բանկը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

## *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական

խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածանտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

■ Բացահայտում և զնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

■ Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

■ Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական զնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

■ Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Բանկի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևավոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Բանկի կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

■ Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ժմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Բացի այդ, մենք կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի մենք պահպանել ենք անկախությանը վերաբերող համապատասխան վարքագծի պահանջները, և որում հաղորդում ենք մեր բոլոր կապակցվածությունները և այլ հարցեր, որոնք կարող են խելամտորեն ազդեցություն ունենալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, համապատասխան պաշտպանվածությունը նման ազդեցությունից: Այս աուդիտորական եզրակացության ձևավորմանը հանգեցրած աուդիտորական առաջադրանքի պատասխանատուն Արմեն Հովհաննիսյանն է:

*Handwritten signature*

Գագիկ Գյուլբուդադյան  
Տնօրեն բաժնետեր



*Handwritten signature*

Արմեն Հովհաննիսյան  
Առաջադրանքի պատասխանատու

26 ապրիլի 2017թ

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ  
ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	<b>21,329,971</b>	19,714,397
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	<b>(12,968,927)</b>	(13,431,362)
<b>Զուտ տոկոսային եկամուտներ</b>		<b>8,361,044</b>	6,283,035
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	<b>1,036,568</b>	1,334,902
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	<b>(289,585)</b>	(257,701)
<b>Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ</b>		<b>746,983</b>	1,077,201
Զուտ առևտրային եկամուտ	8	<b>270,717</b>	677,989
Այլ եկամուտներ	9	<b>1,452,759</b>	1,383,757
Արժեզրկման ծախս	10	<b>(4,436,968)</b>	(2,398,395)
Անձնակազմի գծով ծախսեր	11	<b>(3,128,249)</b>	(3,070,810)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	<b>(450,013)</b>	(412,952)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	21	<b>(84,359)</b>	(80,796)
Այլ ծախսեր	12	<b>(3,150,583)</b>	(2,912,720)
<b>Շահույթ/(վնաս) մինչև հարկում</b>		<b>(418,669)</b>	546,309
Շահութահարկի գծով ծախս	13	<b>(24,549)</b>	(187,828)
<b>Տարվա շահույթ/(վնաս)</b>		<b>(443,218)</b>	358,481
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>			
<i>Հողվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում</i>			
Հիմնական միջոցների վերագնահատում		<b>1,096,106</b>	45,782
Չվերադասակարգվող հողվածներին վերաբերող շահութահարկ		<b>(219,221)</b>	(9,157)
		<b>876,885</b>	36,625
<i>Հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում</i>			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ/(վնաս)		<b>664,809</b>	(468,167)
Վերադասակարգվող հողվածներին վերաբերող շահութահարկ		<b>(132,962)</b>	93,633
		<b>531,847</b>	(374,534)
<b>Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո</b>		<b>1,408,732</b>	(337,909)
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>965,514</b>	20,572
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ/(վնաս)	14	<b>(0.00348)</b>	0.00157

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Շանք.	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>ԱՆՏԻՎՆԵՐ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	33,547,636	26,012,823
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	3,268,547	1,245,854
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	17	99,004	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	18	118,627,063	110,181,548
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	19	14,399,954	4,411,861
Հետզման պայմանագրերով զրավադրված արժեթղթեր	28	-	4,136,760
Հիմնական միջոցներ	20	7,651,713	5,165,342
Ոչ նյութական ակտիվներ	21	1,380,101	1,314,048
Կանխավճար շահութահարկի գծով		81,010	284,081
Այլ ակտիվներ	22	6,341,061	5,387,543
<b>ԸՆդամենը՝ ակտիվներ</b>		<b>185,396,089</b>	<b>158,139,860</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>			
<b>Պարտավորություններ</b>			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	5,042,688	22,255,512
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	128,012,569	103,611,025
Փոխառություններ	25	13,260,387	8,071,190
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	2,652,531	-
Հետաձգված հարկային պարտավորություն	13	957,978	731,041
Այլ պարտավորություններ	26	626,893	762,000
<b>ԸՆդամենը՝ պարտավորություններ</b>		<b>150,553,046</b>	<b>135,430,768</b>
<b>Սեփական կապիտալ</b>			
Բաժնետիրական կապիտալ	29	19,093,378	14,167,947
Եմխիոն եկամուտ		7,790,481	1,387,422
Գլխավոր պահուստ		426,482	421,851
Այլ պահուստներ		916,048	(482,684)
Չբաշխված շահույթ		6,616,654	7,224,556
<b>ԸՆդամենը՝ սեփական կապիտալ</b>		<b>34,843,043</b>	<b>22,709,092</b>
<b>ԸՆդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<b>185,396,089</b>	<b>158,139,860</b>

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 5-ից 66 էջերում, ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից 2017թ. ապրիլի 26-ին:

Վարդան ԱԹԱՅԱՆ  
Վարչության նախագահ



Գոհար ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Գլխավոր հաշվապահ

*Handwritten signature in blue ink.*

9-ից 66 էջերում ներկայացված ծանուցագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը.



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրում- ների գծով վերագնա- հատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնա- հատման պահուստներ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ	13,100,700	-	370,137	(539,186)	384,411	7,120,787	20,436,849
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,067,247	1,387,422	-	-	-	-	2,454,669
Հատկացում պահուստին	-	-	51,714	-	-	(51,714)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(202,998)	(202,998)
Սեփականատերերի հետ գործարքներ	1,067,247	1,387,422	51,714	-	-	(254,712)	2,251,671
Տարվա շահույթ	-	-	-	-	-	358,481	358,481
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>							
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	45,782	-	45,782
Իրական արժեքի փոփոխությունից չվատակված զուտ վնաս	-	-	-	(468,167)	-	-	(468,167)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	93,633	(9,157)	-	84,476
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(374,534)	36,625	358,481	20,572
<b>Հաշվեկշիռը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>14,167,947</b>	<b>1,387,422</b>	<b>421,851</b>	<b>(913,720)</b>	<b>421,036</b>	<b>7,224,556</b>	<b>22,709,092</b>
Բաժնետիրական կապիտալի ավելացում	4,925,431	6,403,059	-	-	-	-	11,328,490
Հատկացում պահուստին	-	-	4,631	-	-	(4,631)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(160,053)	(160,053)
Սեփականատերերի հետ գործարքներ	4,925,431	6,403,059	4,631	-	-	(164,684)	11,168,437
Տարվա վնաս	-	-	-	-	-	(443,218)	(443,218)
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>							
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	1,096,106	-	1,096,106
Իրական արժեքի փոփոխությունից չվատակված զուտ օգուտ	-	-	-	664,809	-	-	664,809
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(132,962)	(219,221)	-	(352,183)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	531,847	876,885	(443,218)	965,514
<b>Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>19,093,378</b>	<b>7,790,481</b>	<b>426,482</b>	<b>(381,873)</b>	<b>1,297,921</b>	<b>6,616,654</b>	<b>34,843,043</b>

**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	<b>(418,669)</b>	546,309
<i>ճշգրտումներ</i>		
Արժեզրկման ծախս	<b>4,436,968</b>	2,398,395
Բռնագանձված գույքի արժեզրկումից/(արժեզրկման հակադարձումից) և իրացումից (օգուտներ)/կորուստներ	<b>(44,451)</b>	223,174
Հիմնական միջոցների արժեզրկում/(արժեզրկման հակադարձում)	<b>89,434</b>	(103,881)
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	<b>534,372</b>	493,748
Հիմնական միջոցների օտարումից վնաս	<b>16,731</b>	17,021
Ստացվելիք տոկոսներ	<b>(1,024,021)</b>	(2,280,884)
Վճարվելիք տոկոսներ	<b>(303,381)</b>	495,761
Ածանցյալ գործիքների վերագնահատում	<b>256,470</b>	-
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	<b>(181,453)</b>	(179,415)
<b>Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները</b>	<b>3,362,000</b>	1,610,228
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	<b>(2,080,268)</b>	(320,892)
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	<b>99,004</b>	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	<b>(14,562,132)</b>	9,379,240
Այլ ակտիվներ	<b>2,694,194</b>	(623,137)
<i>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	<b>(756)</b>	(826,458)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	<b>24,521,896</b>	1,490,851
Այլ պարտավորություններ	<b>(54,014)</b>	(62,136)
<b>Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը</b>	<b>13,979,924</b>	10,647,696
Վճարված շահութահարկ	<b>53,276</b>	31
<b>Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>14,033,200</b>	10,647,727

<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	<b>(8,657,556)</b>	(3,938,810)
Հիմնական միջոցների առք	<b>(2,031,483)</b>	(375,118)
Հիմնական միջոցների վաճառք	<b>85,040</b>	71,922
Ոչ նյութական ակտիվների առք	<b>(150,412)</b>	(140,062)
<b>Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>(10,754,411)</b>	(4,382,068)
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	<b>13,783,159</b>	2,454,669
Շահաբաժինների վճարում	<b>(246,850)</b>	(500,321)
Ֆինանս. կազմակերպ. վարկերի մարում	<b>(17,332,058)</b>	(9,654,080)
Պարտատոմսերի թողարկում	<b>2,637,137</b>	-
Այլ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների ստացում/(մարում)	<b>5,543,439</b>	(6,292,311)
<b>Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>4,384,827</b>	(13,992,043)
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)</b>	<b>7,663,616</b>	(7,726,384)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	<b>26,012,823</b>	34,036,384
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	<b>(128,803)</b>	(297,177)
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (Ծանոթ. 15)</b>	<b>33,547,636</b>	26,012,823
<b>Լրացուցիչ տեղեկատվություն</b>		
Ստացված տոկոսներ	<b>20,305,950</b>	17,765,762
Վճարված տոկոսներ	<b>(13,272,308)</b>	(12,935,601)

## ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՅուՆիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Ուրախ կլիներք ներկայացնել Ձեզ առավել մանրամասն տեղեկատվություն մեր գործունեության և ծառայությունների մասին, քննարկել հնարավոր համագործակցության և ներդրումների վերաբերյալ առաջարկները և նշանակել հանդիպում Ձեզ համար հարմար ժամանակ:

- 
- ☑ Տեղեկատվություն հաճախորդների համար  
+ 374 10 59 55 55  
callcenter@unibank.am
  
  - ☑ Տեղեկատվություն բաժնետերերի համար  
Ներդրողների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների զարգացման վարչություն  
+374 10 59 22 59  
ir@unibank.am  
m.hambardzumyan@unibank.am
  
  - ☑ Բանկի աշխատակազմ  
+374 10 59 22 59  
badoyan@unibank.am
  
  - ☑ Տեղեկատվություն ՋԼՄ-ների համար  
Հասարակայնության հետ կապերի ծառայություն  
+374 10 55 56 86  
khachatryan@unibank.am
  
  - ☑ Բանկի գլխամասային գրասենյակի հասցե՝ 0025, ՀՀ, Երևան, Չարենցի 12, N53, 1-5  
+374 10 59 22 59, +374 10 59 55 55,  
www.unibank.am, corp.unibank.am, prive.unibank.am
  
  - ☑ Աուդիտոր՝ "Գրանթ Թորնթոն" ՓԲԸ  
Հայաստանի Հանրապետություն, 0012, ք. Երևան,  
Վաղարշ Վաղարշյան թ., 8/1տ.  
Հեռ.՝ +374 10 260964





